ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «26» 11 2013թ. № 1223

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ԿԱՄ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 21-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել համապատասխանության գնահատման մարմինների նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ) և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել ստեղծված աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բադալյանին:

ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2013 թ. ----------
N -Ա հրամանի

ԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Լիլի Մաքսուդյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության պետ,
Գուրգեն Պողոսյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի արտակարգ իրավիճակների քաղաքականության ծրագրերի վարչության պետ /համաձայնությամբ/,
Լուսինե Ոսկանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ /համաձայնությամբ/,
Հայկ Բաղալյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Զարգացման վարչության էներգախնայողության և տեխնիկական նորմատիվների բաժնի պետ /համաձայնությամբ/,
Օվսաննա Կարապետյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության վարչության տեխնիկական նորմավորման մեթոդաբանության բաժնի պետ /համաձայնությամբ/,
Գայանե Մարգարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման

	վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի պետ,
Ժաննա Զաքարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Լիլի Մաքսուդյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության պետ,
Մարիաննա Խաչատրյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության վարչության Եվրամիության օրենսդրության մոտարկման բաժնի պետ /համաձայնությամբ/,
Մարգարիտա Բաբայան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության սնուցման բաժնի պետ /համաձայնությամբ/,
Գայանե Մարգարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի պետ,
Ժաննա Զաքարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի գլխավոր

մասնագետ:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Լիլի Մաքսուդյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության պետ,
Գուրգեն Պողոսյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի արտակարգ իրավիճակների քաղաքականության ծրագրերի վարչության պետ /համաձայնությամբ/,
Լուսինե Ոսկանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ /համաձայնությամբ/,
Հայկ Բադալյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Զարգացման վարչության էներգախնայողության և տեխնիկական նորմատիվների բաժնի պետ /համաձայնությամբ/,
Մարգարիտա Բաբայան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության սնուցման բաժնի պետ /համաձայնությամբ/,
Գայանե Մարգարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության

Ժաննա Զաքարյան	Տեխնիկական կանոնակարգման բաժնի պետ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Լիլի Մաքսուդյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության պետ,
Գուրգեն Պողոսյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի արտակարգ իրավիճակների քաղաքականության ծրագրերի վարչության պետ /համաձայնությամբ/,
Լուսինե Ոսկանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ /համաձայնությամբ/,
Գայանե Մարգարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի պետ,
Ժաննա Զաքարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Լիլի Մաքսուդյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության պետ,
Գուրգեն Պողոսյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի արտակարգ իրավիճակների քաղաքականության ծրագրերի վարչության պետ /համաձայնությամբ/,
Լուսինե Ոսկանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ /համաձայնությամբ/,
Հայկ Բաղալյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Զարգացման վարչության էներգախնայողության և տեխնիկական նորմատիվների բաժնի պետ /համաձայնությամբ/,
Օվսաննա Կարապետյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության վարչության տեխնիկական նորմավորման մեթոդաբանության բաժնի պետ /համաձայնությամբ/,
Գայանե Մարգարան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի պետ,
Ժաննա Զաքարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության Տեխնիկական կանոնակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2013թ. ----------
N -Ա հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Ստեղծված աշխատանքային խումբը կազմվում է նշանակմանը հավակնող համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներկայացված հայտի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման գործընթացներն իրականացնելու նպատակով:

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

3. Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչության 3 աշխատակիցներ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգման ոլորտում համակարգող մարմին ճանաչելու, կանոնակարգող մարմինների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 11-ի N 9 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 753-Ն որոշման հավելվածով հաստատված տեխնիկական կանոնակարգման ոլորտում կանոնակարգող մարմինների ներկայացուցիչներ:

4. Աշխատանքային խումբը կազմված է ղեկավարից, քարտուղարից և անդամներից:

5. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի և (կամ) աշխատանքային հանդիպումների միջոցով:

6. Աշխատանքային խմբի ղեկավարը՝

1) հրավիրում է նիստեր և (կամ) աշխատանքային հանդիպումներ,

2) աշխատանքային խմբի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում,

3) ղեկավարում և համակարգում է աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքները,

4) հրավիրված նիստերին և (կամ) աշխատանքային հանդիպումներին մասնակցելու համար սույն հրամանի հավելված 1-ով հաստատված աշխատանքային խմբի կազմում չընդգրկված տեխնիկական կանոնակարգման ոլորտում կանոնակարգող մարմնի ներկայացուցչի/մասնագետի մասնակցության անհրաժեշտություն առաջանալու դեպքում ապահովում է տվյալ ոլորտը կանոնակարգող մարմնի ներկայացուցչի/մասնագետի մասնակցությունը,

5) փաստաթղթերի ուսումնասիրությունից և ստացված արդյունքների ամփոփումից հետո, փաստաթղթերի համապատասխանության դեպքում, 2 օրվա ընթացքում, ՀՀ էկոնոմիկայի նախարարին ներկայացնում է առաջարկ՝ տվյալ ՀԳՄ-ին նշանակման համար՝ համապատասխան ՏԿ-երի պահանջների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնելու իրավունքի վերապահման մասին:

6) ՀԳՆՄ-ի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ սահմանված չափանիշներին/պահանջներին չհետևելու կամ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իր պարտականությունները չիրականացնելու դեպքում ՀՀ էկոնոմիկայի նախարարին ներկայացնում է առաջարկ՝ նշանակման վկայականի գործողությունը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ:

7. Աշխատանքային խմբի անդամները՝

1) ընտրում են աշխատանքային խմբի ղեկավար՝ 3 տարի ժամկետով,

2) առաջարկություններ են ներկայացնում նիստերի և (կամ) աշխատանքային հանդիպումների գումարման վերաբերյալ,

3) մասնակցում են նշանակման համար ներկայացված փաստաթղթերի լրիվ և բազմակողմանի ուսումնասիրմանը, ինչպես նաև տալիս են դրանց մեջ բերված փաստերի և տեղեկատվության անկողմնակալ գնահատական,

4) 24 օրվա ընթացքում ուսումնասիրում են տվյալ ՀԳՄ-ի ներկայացրած փաստաթղթերը՝ դրանք գնահատելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշման հավելվածի 22-րդ կետով սահմանված միավորների համակարգով,

5) փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ամփոփում են ստացված արդյունքները և ներկայացնում աշխատանքային խմբի քարտուղարին:

8. Աշխատանքային խմբի քարտուղարը՝

1) ստուգում է նշանակման համար ներկայացված հայտը և դրան կից փաստաթղթերի լրակազմը,

2) ներկայացված հայտն ու հայտին կից փաստաթղթերը ստանալուց հետո հայտը գրանցում է գրանցամատյանում և 1 օրվա ընթացքում, գրությամբ տվյալ ՀԳՄ-ին տեղեկացնում է ներկայացված հայտն ընդունելու մասին,

3) ներկայացված փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է հայտատուին և առաջարկում հնգօրյա ժամկետում վերացնել դրանք,

4) հրավիրվող նիստերին և (կամ) աշխատանքային հանդիպումներին մասնակցելու համար տեղեկացնում է սույն հրամանի հավելված N 1-ով հաստատված աշխատանքային խմբի կազմում ընդգրկված բոլոր անդամներին, այդ նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով անդամներին տրամադրում է հրավիրվող նիստերին և (կամ) աշխատանքային հանդիպումներին քննարկվելիք փաստաթղթերը (նյութերը՝ վերջիններիս էլեկտրոնային տարբերակով առկայության դեպքում) և ծանուցում նիստերի և (կամ) աշխատանքային

հանդիպումների անցկացման վայրի, ամսաթվի ու ժամի մասին՝ նիստի օրվանից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ,

5) վարում է աշխատանքային խմբի աշխատանքների հետ կապված գործավարությունը,

6) մասնակցում է նշանակման համար ներկայացված փաստաթղթերի լրիվ և բազմակողմանի ուսումնասիրմանը, ինչպես նաև տալիս է դրանց մեջ բերված փաստերի և տեղեկատվության անկողմնակալ գնահատական,

7) գրանցում է աշխատանքային խմբի անդամների ներկայացրած գրավոր հատուկ զեկույցները՝ դրանց առկայության դեպքում,

8) փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ամփոփում է ստացված արդյունքները և զեկուցում աշխատանքային խմբի ղեկավարին,

9) արձանագրում է նիստերը և (կամ) աշխատանքային հանդիպումները, որից հետո կազմում է հրավիրված նիստերի և (կամ) աշխատանքային հանդիպումների վերաբերյալ արձանագրություն,

10) ՀԳՄ-ին գրանցում է Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում ՀԳՄ-ի նշանակման մասին որոշում ընդունելուց հետո,

11) ՀԳՄ-ի նշանակումը մերժելու մասին որոշման ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշման հավելվածի 31-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում գրավոր տեղեկացնում է հայտատուին:

12) նշանակման վկայականի գործողությունը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու մասին որոշման ընդունման դեպքում դրա մասին եռօրյա ժամկետում ծանուցում է ՀԳՆՄ-ին և տեղեկացնում կասեցման պատճառների մասին:

13) ՀԳՆՄ-ի մասին յուրաքանչյուր տեղեկատվություն (այդ թվում նաև ՀԳՆՄ-ի նշանակման չեղյալ հայտարարելու մասին տեղեկությունը) կամ տեղեկատվության փոփոխություն հրապարակում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում և դրա մասին տեղեկացնում է կանոնակարգող մարմնին: